Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Դպրոցը՝ Հերմոնի հիմնական դպրոց

Դասավանդած առարկան՝ հայոց պատմություն

Ուսուցչուհի՝ Օվսաննա Վարդանյան

Ղեկավար՝ Ռուզաննա Բարսեղյան

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 1-2

Մշակույթը X-XIV դարերում---------- 4-21

Եզրակացություն---------- 22

Օգտագործված գրականության ցանկ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերածնունդը եվրոպական պատմամշակութային իրողություն է, որոշակի մի շրջափուլ, որ՝ որպես գաղափարագեղագիտական շարժում, խորհրդանշում է անցումը միջնադարից նոր ժամանակների: Վերածնունդն առավել ամբողջական արտահայտվել է իտալական գրականության մեջ և արվեստի մյուս ճյուղերում՝կերպարվեստ, ճարտարապետություն, երաժշտություն: Այն ձևավորվեց Իտալիայում 14-րդ դարի սկզբներին և գոյատևեց մինչև 16-րդ դարի վերջը: Եվրոպական մյուս երկրներում այդ ալիքը տարածվեց քիչ ավելի ուշ՝ 14-րդ դարի կեսերին և երբեմն հատեց 17-րդ դարի սահմանագիծը: Անվանակոչվեց Ռենեսանս, Ռեստավրացիա, Իտալիայում՝ Rinascimento – Ռինասչիմենտո, Կվիկվիչենտո և ըստ հարյուրամյակների ստացավ տարբեր անվանումներ՝ Դուչենտո (1200-ական թթ.), Տրիչենտո (1300-ական թթ.), Կվատրոչինտո (1400-ական թթ.), Չինկվեչինտո (1500-ական թթ.): Վերածնություն եզրույթը 1550 թ. իր «Կենսապատում» գրքում օգտագործել է գրող և նկարիչ Ջորջո Վազարին, ինչը համաշխարհային ճանաչում ձեռք բերեց ֆրանսերեն Renaissance - Ռենեսանս ձևով: Ժամանակակից կիրառությամբ այդ եզրույթը 19-րդ դարում կիրառել է ֆրանսիացի պատմաբան Ժ.Միշլեն: Վերածնունդ եզրույթն իր հիմնային իմաստով նշանակում է վերածնել: Այսինքն՝ հաղթահարել կաթոլիկ եկեղեցու հազարամյա բռնատիրությունը՝ դոգմաներ, հավատաքննություն, ազատամիտ գաղափարների հալածանքներ, որ սկիզբ առավ քրիստոնեությունը պետական-պաշտոնական կրոն հռչակելուց հետո, և կամուրջ նետել դեպի 4-րդ դար՝ հեթանոսության և անտիկ գրականության վերջը, դրանով իսկ վերածնել ու շարունակել մոռացված դասական արժեքները և շարունակել նրանց ավանդույթները: Այս վերադարձի հիմքում բնության ուսումնասիրությունն էր՝ որպես արժեհամակարգի վերականգնման հիմունք: Վերածնունդը գաղափարական շարժում էր, որ ընդգրկել էր ոչ միայն ամբողջ արվեստն ու մշակույթը, այլև տնտեսական կյանքը: Փոխվում էր մի ամբողջ հասարակարգ. ավատատիրությունը տեղը զիջում էր ձևավորվող կապիտալիզմին: Զարգացան քաղաքները, արհեստները, առևտուրը, եղավ գրատպության գյուտը, սկսվեցին աշխարհանվաճ ճանապարհորդությունները, արվեցին աշխարհագրական մեծ հայտնագործություններ: Վերածնունդի դարաշրջանի եվրոպական գրականությանը, ընդհանրապես՝ արվեստին բնորոշ են նաև այլ հատկանիշեր:
Վերածննդի դարաշրջանը կարելի է բաժանել 4 ժամանակաշրջանի՝

Պրոտոռենեսանս (XIII դ. 2-րդ կես – XIV դ.)

Վաղ վերածնունդ (XV դ. Սկիզբ – XV դ. վերջ)

Բարձր վերածնունդ (XV վերջ – XVI դ. առաջին 20-ամյակ)

Ուշ վերածնունդ (XVI դ. – 1590-ականներ)

Վստահությամբ կարելի է ասել, որ Եվրոպայի բոլոր երկրներում Վերածնունդն ունեցել է հսկայական ազդեցություն:

Ըստ էության՝ Վերածննդի դարաշրջանը ֆեոդալական հասարակական համակարգից բուրժուականին անցումն է: Հենց այդ ժամանակ ձևավորվեցին ազգային կառավարությունները, որոնց մեջ զարգացավ առևտուրը, և հաստատվեցին միջազգային դիվանագիտական հարաբերություններ: Անհավանական տեմպերով զարգացավ գիտությունը և գրատպագրությունը: Աշխարհագրական հայտնագործությունները և բնագիտության առաջացումը մարդկության գիտակցության մեջ հեղափոխում արեցին: Հիմք դրվեց հետագա գիտական տեսությունների և բացահայտումների համար: Նշանակալի առաջընթաց է արձանագրվել տեխնիկայում, հատկապես հանքարդյունահանման և նավաշինության ոլորտներում: Զարգացել է նաև պատմական գիտությունը. պատմաբանները հասարակական գործընթացի շարժիչ ուժ են համարել կուսակցությունների և սոցիալական խմբերի քաղաքական պայքարը: Գրականության հիմնական թեման դարձել է մարդը. ստեղծվել են գրական մնայուն արժեքներ: Պրոֆեսիոնալ երաժշտությունը զարգացել է բանահյուսության ազդեցությամբ, առանձնացել է նոր՝ մարդասիրական աշխարհընկալմամբ և դրսևորվել առաջադեմ երաժշտական գործիչների ստեղծագործություններում: Աշխարհիկ վոկալ և գործիքային երաժշտության մեջ ստեղծվել են նոր ժանրեր, զարգացել է կատարողական արվեստը, գրվել են երաժշտությանը վերաբերող գրքեր: Առաջնակարգ տեղ են գրավել աշխարհիկ կառույցները՝ հասարակական շենքերը, պալատները և քաղաքային տները:

<u>Վերածնունդ եզրույթում իր հզոր և ուրույն տեղն ունեցավ նաև հայկական մշակույթը:</u>

Հայկական մշակույթի ակունքները գալիս են դեռևս հայկական ցեղային միությունների ու պետական կազմավորումների ժամանակներից: Դրանք մեզ ծանոթ են ոչ միայն պահպանված առասպելներից և կրոնական հավատալիքներից, այլև պեղումների նյութերից: Պատմական Հայաստանի տարածքում հայտնաբերվել են բազմաթիվ հնագույն բնակավայրեր, կիկլոպյան ամրոցներ, պեղվել են հարուստ դամբարաններ (Մեծամոր, Լճաշեն, Վանաձոր և այլն): Դրանցում գտնված զենքերը, գործիքները, կենցաղային իրերը, արձանիկներն ու զարդերը վկայում են հին ու բարձր մշակութային զարգացման մասին: Հին հայկական մշակույթի ձևավորման և զարգացման մեջ ուրույն դեր ունեցավ Վանի (Արարատյան) թագավորությունը (Ք.ա. 9-7-րդ դդ.): Վերջինիս անկումից հետո ուրարտական հայտնի սեպագիրը մոռացվեց: Ուրարտուի քաղաքաշինությունն ու որմնանկարչությունն աչքի էին ընկնում ուշագրավ առանձնահատկություններով: Դրանք բացահայտվել են քաղաք-ամրոցների՝ Էրեբունիի (Երևանի), Արգիշտիխինիլիի և Թեյշեբաինիի պեղումների ժամանակ: Պահպանվել են ոչ միայն շինարարական արվեստի, այլև կավե և մետաղյա իրերի, զենք ու զրահի, զարդերի բազում նմուշներ:

Հայկական վերածնունդ, պայմանական եզրույթ մշակութաբանության և պատմական գիտությունների մեջ, որը բնորոշում է հայկական մշակույթի պատմության 10-14-րդ հարյուրամյակների ժամակաշրջանը:

Հայկական մշակույթն հազարամյակների պատմություն ունի: Լինելով Առաջավոր Ասիայի զարգացող երկրներից մեկը, աշխարհագրական դիրքի թելադրանքով կապող օղակ է եղել Արևելքի և Արևմուտքի միջև: Մեր երկիրը, որ հայտնի է «Թանգարան բաց երկնքի տակ» անվամբ, դարերի ընթացքում կերտել է ինքնատիպ և հարուստ մշակույթ: Հայկական մշակույթը X-XIV դարերում զարգացման բարձր մակարդակի հասավ:Մեծ զարգացում ստացավ գեղարվեստական գրականությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունը և այլ բնագավառներ:Հայերն ունեին բազմադարյան մշակույթ և դրա զարգացմանը նպաստեցին մի շարք գործոններ: Դրանցից մեկը օտարի լծի թոթափումն էր և հայկական պետականության վերականգնումը: Բագրատունիները և Զաքարյանները Հայաստանում,Ռուբինյանները Կիլիկիայում խրախուսում, հովանավորում էին մշակութային ձեռնատիրությունները, որի արդյունքում բացվում են դպրոցներ, համալսարաններ, զարգանում էր բանահյուսությունը, գեղարվեստականությունը, գրականությունը, պատմագրությունը: Հայկական մշակույթը եզակի է: Այն արտացոլվում է կյանքի յուրաքանչյուր ասպարեզում ՝ ճարտարապետություն, թատրոն, երաժշտություն, նկարչություն, գրականություն: Հինավուրց ժամանակներից ի վեր հայերը ջանում են ստեղծել և պահպանել իրենց մշակույթի և ավանդույթների յուրաքանչյուր մասը: Հայ ժողովուրդը անսահման գնահատում, սիրում և սերնդեսերունդ փոխանցում է յուրաքանչյուր բանաստեղծություն, արվեստի գործ, կինոնկարների գլուխգործոցներ, ժողովրդական պարերի յուրաքանչյուր տարր, և յուրաքանչյուր հայ հպարտ է, որ նպաստում է հայ մշակույթի բարգավաճմանը: Հայկական մշակույթը հանդես է եկել որպես բարդ համակարգ, որը մշտապես գտնվել է տարբեր ժողովուրդների փոխազդեցությունների ոլորտում, բայց պահպանել է իր ինքնատիպությունն: Խնամքով պահպանելով ու հարստացնելով սեփականը՝ հայ ժողովուրդը իր արժանի ավանդն է ներդրել երկրագնդի ժողովուրդների ընդհանուր մշակութային գանձարանում: Պատմական հանգամանքների բերումով՝հայկական մշակույթը զարգացել է ոչ միայն իր բուն հայրենիքում, այլև Սփյուռքում՝ դարեր շարունակ հանդիսանալով հայությունը միավորող և նրա ինքնությունը պահող կարևորագույն նեցուկը

Հայկական մշակույթի վերածնունդը X-XIV դդ

Մշակույթի զարգացման նախադրյալները

X-XIV դդ. բարձր զարգացման հասան նյութական և հոգևոր մշակույթի բոլոր բնագավառները: Մշակութային վերածնունդը պայմանավորված էր երկրի քաղաքական և տնտեսական առաջընթացով: Պետականության վերականգնումից ու ամրապնդումից հետո տևական խաղաղություն էր հաստատվել, բարգավաճում էր տնտեսությունը: Հայ թագավորները դպրոցական գործի, գիտության և արվեստի հովանավորներ էին:

Մշակութային վերելքը պայմանավորված էր նաև քաղաքային կյանքի վերածնունդով: Միջնադարյան քաղաքներն առաջ էին քաշում աշխարհիկ կրթություն ստացած, բնական գիտություններին, իրավագիտությանն ու բժշկագիտությանը տեղյակ մարդկանց մեծ պահանջ: Քաղաքներում ապրող մեծահարուստները հանդես էին գալիս որպես բարձրարվեստ գործերի պատվիրատուներ:

Մշակութային առաջընթացի կարևոր նախադրյալ էր նաև հարևան երկրների հետ բազմազան շփումների աշխուժացումը:

Դպրոց :

X-XIV դդ. աճեց դպրոցների թիվը, ընդլայնվեց դասավանդվող առարկաների քանակը: Նախնական ուսուցումը կատարվում էր տարրական դպրոցներում, որոնք գործում էին խոշոր գյուղերում, վանքերում և քաղաքներում: Այդ դպրոցները, սովորաբար, պահվում էին եկեղեցու և պետության հաշվին: Կային նաև վճարովի մասնավոր դպրոցներ: Տարրական դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել և երգել: Երեխաները դպրոց էին ընդունվում 12-13 տարեկանում և սովորում շուրջ 3 տարի:

Նոր երևույթ էր բարձրագույն տիպի դպրոցների՝ վարդապետարանների հանդես գալը: Վարդապետարաններում դասընթացի տևողությունը 7-8 տարի էր: Դասընթացը յուրացնելուց հետո սաները ստանում էին վարդապետի աստիճան և ուսուցչությամբ զբաղվելու իրավունք: Դասագրքերը ձեռագիր էին, չափազանց թանկ և փոխանցվում էին սերնդից սերունդ: XI-XII դդ. հայտնի էր Անիի վարդապետարանը, որտեղ գործունեություն էր ծավալել Հովհաննես Իմաստասերը:Նա սովորել է Հաղբատի դպրոցում Դավիթ Ալավկաորդու և Գրիգոր Թոքատեցու հետ:

Հաղպատ 10-13-րդ դարեր

Հայկական վերածննդի ամենավառ ու լուսավոր իրողությունը Անիի մայր տաճարի ծաղկումն էր:



Անիի մայր տաճար 11-րդ դար

Այստեղ իր գործունեությունը ծավալեց Հովհաննես Իմաստասերը : Ինչպես Կենսագիրը նշում է , որ Հովհաննեսը <<Իմաստուն մեղվի պես մտքում ամբարելով երանգ-երանգ ,տարբեր հոտի ու համի ծաղիկներ, բերեց իր քաղաքը, ծննդավայրը, քաղաքամայր Անի և փարթամությամբ լցրեց տունը>>: Նրա ուսուցչապետության տարիներին Անիի վարդապետարանը բազում շրջանավարտներ տվեց, որոնցից հայտնի են Երեմիա Անձրևիկը, Սամուել Անեցին, Ստեփանոս Զոմզոման և ուրիշներ: Նրա սաները կրթական գործը տարածեցին Հայաստանի տարբեր վայրերում:Հովհաննես Սարկավագը նաև բանաստեղծ էր իմաստասերը , ստացել է նաև երաժշտական կրթություն:Նրա անվան հետ են կապված Ղևոնդյանց <<Պայծառացման >> շարականը և հարության <<Ճագումն փառաց >> տաղը:

Հովհաննես Իմաստասեր 1045-1129թթ.

Հայաստանյան վարդապետարաններից ամենանշանավորը Գլաձորի համալսարանն էր, որը 1280-ական թվականներին հիմնադրեց Ներսես Մշեցին: Համալսարանը հովանավորում էին Պռոշյան և Օրբելյան իշխանները: Եսայի Նշեցու ուսուցչապետության տարիներին այստեղ սովորելու էին գալիս հարյուրավոր երիտասարդներ: Գլաձորում դասավանդումը կատարվում էր ժամանակի եվրոպական համալսարանների մակարդակով:Գլաձորի համալսարանի բարգավաճմանը նպաստել է Ստեփանոս Օրբելյանը,որի հաղորդումներից պարզվում է, որ Սյունիքի առաջավոր մտավորականությունը չէր սահմանափակվում միայն եկեղեցական ու գիտական խնդիրների շրջանակներով, այլև վճռական դեր էին կատարում երբեմն ամբողջ հայ ժողովրդի շահերը շոշափող հարցերի լուծման ժամանակ: Երբ քաղաքական ու տնտեսական ծանր պայմանները հարկադրեցին դադարեցնել Գլաձորի համալսարանի գործունեությունը, նրա սաները տեղափոխվեցին Տաթևի համալսարան:

Թանահատի վանք 13-րդ դար

Գլաձորի համալսարան

Գլաձորի համալսարանի ավանդույթներով նույն Սյունիքում ստեղծվեց ու ծաղկում ապրեց մի նոր համալսարան՝ Տաթևի համալսարանը: Հայ դպրության և մշակույթի այդ փառավոր օջախի հիմնադիրը հանդիսացավ Գլաձորի նախկին սան, տաղանդավոր գիտնական Հովհան Որոտնեցին (1315-1386): 1340-ական թթ. սկզբին՝ Գլաձորի համալսարանի անկումից հետո, Հ. Որոտնեցին Վայոց ձորից անցնում է Ծղուկ՝ Որոտն, և ձեռնամուխ լինում նոր կրթօջախի ստեղծմանը: Ստանալով Օրբելյան իշխանների հովանավորությունը՝ նա 1340-ական թ. կեսերին տեղափոխվում է Տաթև և ավելի ամուր հիմքերի վրա դնում կրթության գործը: Կարճ ժամանակում Որոտնեցու կրթարանը վերածվում է լիարժեք համալասարանի, որտեղ գալիս էին սովորելու ոչ միայն Սյունիքից, այլև ամբողջ Հայաստանից ու Կիլիկիայից: Տաթևի համալսարանը ուսուցիչներ էր պատրաստում Սյունյաց և այլ վայրերի համար, ավելին՝ նրա գլխավորությամբ հաստատվում են մի շարք դպրոցներ, և ինքը դառնում է այդ դպրոցների կենտրոնը: Օգտագործելով Գլաձորի համալսարանի փորձը՝ Հ.Որոտնեցին կատարելագործեց ուսումնական ծրագրերը, կանոնավորեց նոր աշակերտների ընդունելությունը և ուսումնականների աստիճանականությունը: Տաթևի համալսարանի ներքին կազմակերպվածությունը նոր մակարդակի բարձրացրեց Որոտնեցու ամենատաղանդավոր սանն ու գործի շարունակողը՝ Գրիգոր Տաթևացին (1346-1409): Նրա ղեկավարման տարիները դարձան Տաթևի համալսարանի ամենաբեղմնավոր ու ծաղկուն շրջանը: Հ. Որոտնեցու և Գր. Տաթևացու ժամանակակիցներից քչերն են այդքան պարզ գիտակցել, որ տվյալ պատմական պայմաններում ազգային մշակույթի պահպանումն ու զարգացումն հոշոտված Հայաստանի համար գրեթե միակ մի-ջոցն էր ահեղ, բայց տգետ ու բիրտ զավթիչներին ընդդիմանալու համար: Բազմակողմանի զարգացած, անչափելի գիտական ժառանգության թողած այս տաղանդավոր այրերի և նրանց սաների ու հետևորդների ջանքերի շնորհիվ էր, որ Տաթևի համալսարանը դար-ձավ ժամանակի խոշարագույն գիտամշակութային կենտրոնը,որտեղ արձանագրվեցինհամաշխարհային մասշտաբով նշանակալի գիտական նվաճումն եր: Դրանք ավելի տպավորիչ են երևում երկրի քաղաքական կյանքի ֆոնի վրա, երբ օտար բռնակալների հալածանքների պատճառով համալսարանը ժա-մանակ առ ժամանակ ստիպված էր վարել թափառական կյանք: Գր. Տաթևացու մահից հետո **Տաթևի համալսարանն** սկսեց անկում ապրել: XV դարի 20-ական թթ. կեսերին որպես համալսարան վերջնականապես դադարեց գործելուց: **Տաթևի համալսարանն** իր գլխավորած դպրոցների հետ միասին մոտ 8 տասնամյակ կենդանի պահեց անցյալի մշակութային ավանդույթները և զգալի ավանդ ներմուծեց միջնադարյան հայ մշակույթի գանձարան:

ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

10-ՐԴ ԴԱՐ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Պատմագրություն

Պատմագրություն: Զարգացած միջնադարում առաջացան հայ պատմագրության նոր ժանրեր՝ **տիեզերական պատմագրություն և տարեգրություն:** Տարեգրություն դեպքում պատմությունը շարադրում էին համառոտ՝ ըստ ժամանակագրոկան հերթականության: Հայոց պետմության շարքը շարունակում է կաթողիկոս **Հովանես Դրասխանակերտցին:** Հաջորդ պատմագիրը **Արիստակես Լաստիվերցին է**: Գրել է հայ-բուզանդական հարաբերությունները, սելյուկյան արշավանքները: 13-րդ դ. պատմագիր է **Կիրակոս Գանձակեցին**, ով գրել է քրիստոնեության ընդունումից մինչև 1265թթ. : **Ստեփանոս Տարոնեցին** գրել է <<տիեզերայան պատմություն>> աշխատությունը: Վարդան Արևելցին 13-րդ դ. գրեց <<տիեզերական պատմություն>> աշխատությունը՝ <<անսկիզբ>> ժամանակներից մինչև 1267թ. : **Թովմա Արծրունին** գրել է Վասպուրական նահանգի և Արծրունիների տոհմի պատմությունը: 13-րդ դ. **Ստեփանոս Օրբելյանը** գրել է<<Պատմություն նահանգին սիսական>> աշխատությունը սյունիքի նահանգի մասին: **Մատթեոս Ուռհաեցին** ներկայացնում է Առաջավոր Ասիայի 10-12-րդ դդ. պատմությունը <<Ժամանակագրություն>> աշխատությունում: **Սմբատ Գունդստաբլը** իր <<Տարեգիրք>> աշխատությունում շարադրում է Բագրատունյաց թագավորության շրջանի իրադաձությունները, Կիլիկյան Հայաստանի պատմությունը:

Պատմագրություն: Զարգացած միջնադարում առաջացան հայ պատմագրության նոր ժանրեր՝ տիեզերական պատմագրություն և տարեգրություն: Տարեգրություն դեպքում պատմությունը շարադրում էին համառոտ՝ ըստ ժամանակագրոկան հերթականության: Հայոց պետմության շարքը շարունակում է կաթողիկոս Հովանես Դրասխանակերտցին: Հաջորդ պատմագիրը Արիստակես Լաստիվերցին է: Գրել է հայ-բուզանդական հարաբերությունները, սելյուկյան արշավանքները: 13-րդ դ. պատմագիր է Կիրակոս Գանձակեցին, ով գրել է քրիստոնեության ընդունումից մինչև 1265թթ. : Ստեփանոս Տարոնեցին գրել է <<տիեզերայան պատմություն>> աշխատությունը: Վարդան Արևելցին 13-րդ դ. գրեց <<տիեզերական պատմություն>> աշխատությունը՝ <<անսկիզբ>> ժամանակներից մինչև 1267թ. : Թովմա Արծրունին գրել է Վասպուրական նահանգի և Արծրունիների տոհմի պատմությունը: 13-րդ դ. Ստեփանոս Օրբելյանը գրել է<<Պատմություն նահանգին սիսական>> աշխատությունը սյունիքի նահանգի մասին: Մատթեոս Ուռհաեցին ներկայացնում է Առաջավոր Ասիայի 10-12-րդ դդ. պատմությունը <<Ժամանակագրություն>> աշխատությունում: Սմբատ Գուն դստաբլը իր <<Տարեգիրք>> աշխատությունում շարադրում է Բագրատունյաց թագավորության շրջանի իրադաձությունները, Կիլիկյան Հայաստանի պատմությունը:

Ստեփանոս Օրբելյան



Սմբատ Գունդստաբլ

Փիլիսոփայություն

Մեծ զարգացում ապրեց հայ փիլիսոփայական միտքը: Նշանավոր էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որը, զորավար ու քաղաքական գործիչ լինելուց բացի, նաև բազմակողմանի կրթված գիտնական էր: Նա թարգմանում և մեկնաբանում էր հին հունական փիլիսոփայական աշխատությունները:

Հանրագիտարանային գիտելիքների տեր էր ականավոր փիլիսոփա ու տաղանդավոր բանաստեղծ Հովհաննես Իմաստասերը: Փիլիսոփայական կրթությանը մեծ ուշադրություն էին դարձնում Գլաձորի ու Տաթևի համալսարաններում:

Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու աշխատությունները նշանակալից առաջընթաց էին հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ:



Հովհաննես Իմաստասեր

Փիլիսոփայություն

Աննախադեպ էր հայ իրավագիտության զարգացումը: 12-րդ դարի սկզբին կենցաղային հարցեր կարգավորող կանոնագիրք գրեց Դավիթ Գանձակեցին: 12-րդ դարի վերջին Մխիթար Գոշը գրեց «Գիրք դատաստանի» նշանավոր աշխատությունը, որը երկար ժամանակ օգտագործվել է որպես օրենսգիրք և դեռևս միջնադարում թարգմանվել է տարբեր լեզուներով: 13-րդ դարում Սմբատ Գունդստաբլի գրած Դատաստանագիրքը հարմարեցված էր Կիլիկյան Հայաստանի պայմաններին:



Բնական Գիտություններ

Ժամանակի առաջադրած պահանջներով էր պայմանավորված նաև բնական գիտությունների վերելքը: Մաթեմատիկայի ասպարեզում կարևոր աշխատանք կատարեց Գրիգոր Մագիստրոսը: Նա է առաջին անգամ հայերեն թարգմանել Էվկլիդեսի «Երկրաչափությունը»: Ականավոր գիտնական Հովհաննես Իմաստասերը հարստացրեց ժամանակի թվաբանական գիտությունը, ուսումնասիրեց և բարեփոխեց հայկական օրացույցը: Այդ դարաշրջանի հայ գիտնականներն զբաղվել են նաև կենդանաբանության, կենսաբանության և բժշկագիտության հարցերով: Հայ բժիշկներից ամենահռչակավորը Մխիթար Հերացին էր: Նրա «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը շարադրված է ժամանակի խոսակցական լեզվով, որպեսզի բոլորը «կարդան և օգուտ քաղեն»: Հայ բժիշկները հիվանդություններն ուսումնասիրելու նպատակով նույնիսկ դիահերձումներ էին կատարում, ինչն արգելված էր Եվրոպայում:



Գրականություն, ժողովրդական բանահյուսություն, առակագրություն

Զարգացում ապրեց նաև հայ ժողովրդական բանահյուսությունը, գեղարվեստական գրականությունը, առակագրությունը: Բանահյուսության մեջ հարստացվեցին ժողովրդի կողմից ստեղծվող երգերը, հարսանեկան, սիրային խաղիկները: Լրացվեց «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը:

Ժամանակաշրջանի հայ գրականության ամենավառ դեմքը համարվում է Գրիգոր Նարեկացին «Մատյան ողբերգության» աշխատությունը ժողովրդի մեջ հայտնի է նաեւ «Նարեկ» անունով: Այն թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով և մեծ հռչակ է վայելում:



Իրենց գրական ստեղծագործություններում հայ ժողովրդի վիճակն են ներկայացրել Ներսես Շնորհալին և Ֆրիկը: Ներսես Շնորհալին գրել է նաև հանելուկներ: 12-13-րդ դարերում որպես գեղարվեստական գրականության առանձին ճյուղ Հայաստանում զարգանում է առակագրությունը, որի կարկառուն ներկայացուցիչներն էին Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին:

Նյութական մշակույթ և արվեստ

Ճարտարապետություն

Հայ ճարտարապետությունը նույնպես մեծ վերելք ապրեց: Առաջ եկան վանական համալիրները, որոնք իրենց մեջ ընդգրկում էին եկեղեցիներ, մատուռներ և օժանդակ շենքեր: Նշանավոր է Այրիվանքի (Գեղարդավանքի) վանական համալիրը՝ ժայռափոր եկեղեցիներով: Մանվել ճարտարապետը Աղթամար կղզում 10-րդ դ. առաջին քառորդում կառուցում է Սուրբ Խաչ եկեղեցին: Եկեղեցու պատերը դրսից զարդարված են գեղեցիկ քանդակներով, իսկ ներսից՝ որմնանկարներով:Դար աշրջանի հայ ճարտարապետության փայլատակման իսկական արգասիք էր Անին: Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը: Անիի աշխարհիկ շինությունները եղել են ժամանակի քաղաքակրթական ամենաբարձր մակարդակի վրա, սակայն ճարտարապետական կերպարը նախևառաջ ձևավորվել է եկեղեցաշինությամբ: Եկեղեցիներն ու մատուռներն այնքան շատ էին, որ մայրաքաղաքը միջնադարում անվանում էին «հազար ու մեկ եկեղեցիների քաղաք»: Այս շրջանում է ձևավորվել Անիի ճարտարպետական հայտնի դպրոցը, որի ոճը լայնորեն տարածվել է ողջ քրիստոնեական աշխարհում: Անիի Մայր տաճարը կառուցվել է 989-1001թթ.՝ Բագրատունյաց դինաստիայի բարգավաճման շրջանում: Անիի եկեղեցաշինության լավագույն նմուշներից է 1215թ. Տիգրան Հոնենցի կառուցած Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը հայտնի է որմնանկարներով ու դեկորատիվ կամարներով:

Տիգրան Հոնենց եկեղեցի 13-րդ դար

Սուրբ Խաչ եկեղեցի (Ախթամար) 10-րդ դար

Հայկական ճարտարապետությունը խարսխված է ազգային մշակույթի հարուստ ավանդույթների վրա: Կարևոր են նաև այլ ժողովուրդների հետ մշակութային շփումներն ու փոխազդեցությունները: Հայրենի (Թորոս Թորամանյան և ուրիշներ) և

օտար (Դյուբուա, Շառլ Դիհլ, Յոզեֆ Ստրժիգովսկի, Նիկողայոս Մառ և ուրիշներ) հեղինակներից շատերը նշել են հայկական միջնադարյան ճարտարապետության ազդեցությունը Արևմտյան Եվրոպայի ճարտարապետության վրա: Հայկականն էլ իր հերթին ազդեցություն է կրել այլ երկրների ճարտարապետությունից, ինչպես մ. թ. ա. III դարում՝ հայկական հելլենիզմի շրջանում՝ Հին Հունաստանի ճարտարապետությունից. լավագույն օրինակը հունա-հռոմեական պերիպտեր տիպի Գառնիի տաճարն է (I դար): Ճարտարապետությունը Հայաստանում ամենազարգացած արվեստներից է, քանի որ այն լավագույնս է արտացոլում հայ ժողովրդի ստեղծարար ու արարող հոգեկերտվածքը: Հայաստանն անվանում են «քարի երկիր». Այն հարուստ է ամենատարբեր գույների ու երանգների գործնականում բոլոր բնական շինաքարերով՝ տուֆ, մարմար, բազալտ, տրավերտին, գրանիտ և այլն:

X–XI դարերում՝ հայկական պետականության վերականգնման շրջանում, Հայաստանի հյուսիսում կառուցվեցին Հաղպատի ու Սանահինի վանքերը, Վանա լճի Աղթամար կղզում՝ Սուրբ Խաչ եկեղեցին, ծաղկման հասավ Բագրատունյաց Հայաստանի հիասքանչ մայրաքաղաքը՝ «տիեզերական քաղաք» Անին: XII – XIV դարերում ստեղծվեցին հայկական պաշտամունքային ճարտարապետության գլուխգործոցները՝ Տաթևի, Կեչառիսի ու Հաղարծինի վանքերը, Գոշավանքը, Հովհաննավանքը, Սաղմոսավանքը, Նորավանքը, Գանձասարի վանքը և բազմաթիվ այլ ճարտարապետական կոթողներ: Այս շրջանում է կառուցվել նաև ժայռափոր Գեղարդավանքը: XV – XIX դարերում պատմական Հայաստանի տարածքում կառուցվել են հազարավոր վանքեր ու եկեղեցիներ, որոնցից յուրաքանչյուրը, որպես ճարտարապետական հուշարձան, ունի բացառիկ արժեք: Այսօր նույնպես Հայաստանում եկեղեցիները կառուցվում են միջնադարյան հայկական ճարտարապետության կանոններով: Միջնադարյան ճարտարապետության նշանավոր երք գործիչներն են Մանուելը, Տրդատը և Մոմիկը: Հայկական միջնադարյան ճարտարապետության փայլուն օրինակներ են նաև մեզ հասած իշխանական բերդերն ու ամրոցները, կամուրջներն ու իջևանատները, որոնցից առանձնանում են Ամբերդի ամրոցն ու Սելիմի իջևանատունը: Դժվար է գերագնահատել հայկական ճարտարապետության ավանդը համաշխարհային ճարտարապետության զարգացման գործում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում են ընդգրկված Սուրբ Գայանե և Սուրբ Հռիփսիմե եկեղեցիները, Էջմիածնի Մայր տաճարը, Զվարթնոցի ու Գառնիի տաճարները, Հաղպատի, Սանահինի ու Գեղարդի վանքերը:Հայաստանը պատկառելի ավանդ ունի համաշխարհային մշակույթի զարգացման գործում: Հայկական մշակութային ժառանգության կարևոր բաղկացուցիչներից մեկը խաչքարերի՝ աշխարհում եզակի մշակույթն է:

Հսկայական քարե սալերի վրա փորագրված ժանեկահյուս ու փորագրազարդ խաչերը, որոնք խորհրդանշում են Քրիստոսի հաղթանակը մահվան նկատմամբ, Հայաստանում կերտվում են արդեն ավելի քան մեկ հազարամյակ: Մոմիկի, Վարդանի,Պողոսի և մյուս հռչակավոր քարգործ վարպետների հիասքանչ և մեկը մյուսին չկրկնող աշխատանքներով կարելի է հիանալ Հայաստանում ամենուր գտնվող հնադարյան գեղատեսիլ վանքերում: Աշխարհում խաչքարերի ամենամեծ հավաքածուն համարվում է Նորատուսի գերեզմանատունը:

Նորատուս

Թատրոն , երաժշտություն

Շարունակվում էր թատերական արվեստի տարածումը: Թատերական ներկայացումները բազմաթիվ հանդիսատեսներ էին հավաքում: Սովորական էին լարախաղացությունը, մրցում - խաղերը, վարժեցված կենդանիներով ներկայացումները: Դերասանները հանդես էին գալիս հատուկ զգեստներով և դիմակներով:

Զարգացման ավելի բարձր մակարդակի հասնում երաժշտությունը : Առաջին հերթին հարստացավ գյուղական երաժշտությունը, մշակվեցին հայ գեղջկական երգերը: Ազգային գուսանական երգ ու երաժշտությունը, գուսանների երգերն աշխարհիկ բնույթ ուեին և արտահայտում էին հասարակ մարդկանց զգացումները: Առաջադիմեց նաև հայ եկեղեցական երաժշտությունը: Հոգևոր երգերը՝ շարականները , աչքի էին ընկնում պարզությամբ և մեղեդիների գեղեցկությամբ:

9-14-րդ դարերի հոգևոր և նյութական մշակույթն ազգային հիմքի վրա ստեղծված ժողովրդի արժեքավոր ձեռքբերումներից է : Այդ ժամանակաշրջանի հայ մշակույթն աչքի ընկնող ներդրող ներդրում է համաշխարհային գիտության, գրականության և արվեստի գանձարանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով X-XIV դարերի մշակույթը իրավամբ կարող ենք ասել,որ Հայաստանն ու Կիլիկիայի հայկական թագավորությունը ապրել են մի շրջան,երբ առկա են եղել Վերածնությանը բնորոշ երևույթներ թե՛ տնտեսության և թե՛ մշակույթի բնագավառներում: Հայ ժողովուրդը դարեր շարունակ եղել է մշակույթի բարձր կրող: Մենք ունեցել ենք փայլուն «Ոսկեդար»,որը խորը հետք է թողել հայ իրականության մեջ: Եվ այդ Ոսկեդարը չէր կարող չվերածնվել X-XIV դարերում: Հայ իրականության մեջ Վերածնության դարաշրջանին բնորոշ երևույթները չխորացան և չհասան այն մակարդակին,որին հասավ Եվրոպան: Մշակույթի զարգացումը կանգ առավ նախնական փուլում: Ժողովուրդը կորցրեց իր անկախությունը: Սելջուկյան արշավանքները կասեցրին տնտեսական կյանքի զարգացումը, իսկ մոնղոլական արշավանքներն ու տիրապետությունը երկիրը տարան դեպի տնտեսական քայքայման,արգելակելով հասարակական կյանքի առաջընթացը: Այնուամենայնիվ դարաշրջանի մշակույթը խորը հետք թողեց ճարտարապետության, պատմագրության, իրավական մտքի և փիլիսոփայության զարգացման վրա:

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով: Հասկացությունն օգտագործվում է որոշակի պատմական դարաշրջանների, հասարակական-տնտեսական ֆորմացիաների, կոնկրետ հասարակարգերի, ազգությունների, ազգերի, ինչպես նաև կյանքի ու գործունեության առանձնահատուկ եղանակների զարգացման մակարդակը բնութագրելու համար: Մշակույթը կենտրոնական հայեցակարգ է մարդաբանության մեջ և ներառում է այն բոլոր երևույթները, որ սոցիալական ուսուցման միջոցով փոխանցվում են մարդկային հասարակություններում:

Մշակույթն ընդգրկում է ոչ միայն մարդկանց գործունեության առարկայական արդյունքները (մեքենաներ, տեխնիկական կառույցներ, արվեստի ստեղծագործություններ, իրավունքի և բարոյականության նորմեր և այլն), այլև սուբյեկտիվ մարդկային ուժերն ու ընդունակությունները, որոնք իրականացվում են գործունեության մեջ (գիտելիքներ, ունակություններ, արտադրական և մասնագիտական հմտություններ, աշխարհայացք և այլն): Մշակույթը, արտադրության հոգևոր և նյութական տեսակներին համապատասխան, բաժանվում է հոգևոր մշակույթի և նյութական մշակույթի : Նյութական մշակույթն ընդգրկում է ողջ նյութական գործունեությունը և դրա արդյունքները (աշխատանքի գործիքներ, կացարան, հագուստ, հաղորդակցության միջոցներ, տեխնոլոգիաներ, ճարտարապետություն, արվեստ և այլն), հոգևոր մշակույթը՝ գիտակցության, հոգևոր արտադրության ոլորտը
(ճանաչողություն, բարոյականություն, դաստիարակություն, լուսավորություն, հասարակական գիտակցության
ձևեր), առասպելաբանություն, փիլիսոփայություն, գրականություն (բանավոր և գրավոր): Գիտությունը կազմում է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ստեփան Մելիք-Բախշյան,Ժամկոչյան «Հայ ժողովրդի պատմություն». Երևան 1975թ.

2.**Հայ ժողովրդի Պատմություն,**

Խմբ. կոլ.՝ Աղայան Է. Բ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ.: ՀՍՍՀ ԳԱ Պատմության ին-տ. Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971 .

3. Թովմա Արծրունի «Պատմություն տանն Արծրունյաց»